

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի
Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետության
ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների
իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվական
փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության
փոխանակման մասին**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի
Դաշնության Կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),
առաջնորդվելով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված
սկզբունքներով և նորմերով,
ցանկանալով զարգացնել Կողմերի պետությունների իրավասու մարմինների
միջև համագործակցությունը՝ տեղեկատվական փոխգործակցության և
էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման հարցերում,
համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի առարկա է հանդիսանում էլեկտրոնային տարբերակով
տեղեկատվական փոխգործակցության կազմակերպումը Հայաստանի
Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև հարաբերություններում
գործող միջազգային պայմանագրերի շրջանակներում, որոնց կատարման համար
իրավասու մարմիններ են սահմանվել Հայաստանի Հանրապետության
ոստիկանությունը և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարությունը:

Սույն Համաձայնագրի շրջանակներում չի իրականացվում Կողմ
պետությունների պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության
փոխանակում:

Կողմ պետությունների իրավասու մարմիններն իրականացնում են
էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակում՝ օգտագործելով
տեղեկատվական համակարգեր, ծրագրային տեխնիկական միջոցներ, և (կամ) մյուս
Կողմի իրավասու մարմինն տրամադրում են հասանելիություն Կողմերի
պետությունների իրավասու մարմինների վարույթում գտնվող տեղեկատվական
համակարգերի ռեսուրսներին (այսուհետ՝ տեղեկատվական համակարգեր):

Կողմերի պետությունների իրավասու մարմինները պարտավորվում են
աջակցել տեղեկատվական համակարգերում առկա տեղեկատվության
անվտանգության, ամբողջականության և հավաստիության ապահովմանը:

Կողմ պետությունների իրավասու մարմինների տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվելու է սույն Համաձայնագրի, սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված տեխնիկական արձանագրությունների հիման վրա, Կողմ պետությունների ազգային օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակիցներն են հանդիսանում իրենց պետությունները:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի իրականացման համար Կողմ պետությունների իրավասու մարմիններ են հանդիսանում.

Ռուսաստանի Դաշնության կողմից՝ Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարությունը,

Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

Կողմ պետությունների իրավասու մարմինները որոշում են տեղեկատվական փոխգործակցության ապահովման համար լիազորված ստորաբաժանումներ և տեղեկացնում միմյանց իրենց լիազորված ստորաբաժանումների ցանկի մասին:

Յուրաքանչյուր Կողմ մեկ ամսվա ընթացքում իրենց իրավասու մարմինների փոփոխության մասին գրավոր ծանուցում է մյուս Կողմին՝ դիվանագիտական ուղիներով:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար Կողմ պետությունների իրավասու մարմինների լիազորված ստորաբաժանումները մշակում են տեղեկատվական և տեխնոլոգիական փոխգործակցության տեխնիկական արձանագրություններ:

Տեխնիկական արձանագրություններում սահմանվում են տեղեկատվության փոխանակման նպատակները, տեղեկատվության պաշտպանության կարգը, էլեկտրոնային եղանակով փոխանցվող և ստացվող տեղեկությունների ցանկը, ժամկետները, տեխնոլոգիան, դրանց փոխանցման, պահպանման և ոչնչացման կարգը, տեխնիկական միջոցների տեղադրման, կապուղիների շահագործման հանձնման և դրանց սպասարկման ժամանակացույցը:

Տեխնիկական արձանագրությունները հաստատվում են Կողմ պետությունների իրավասու մարմինների ղեկավարների (պետերի) կողմից:

Տեխնիկական արձանագրությունների պահանջների կատարման հետ կապված անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումներից հետո, Կողմ պետությունների իրավասու մարմինները գրավոր ծանուցում են միմյանց տեղեկատվական փոխանակման պատրաստականության մասին:

Հոդված 4

Կողմ պետությունների իրավասու մարմինները՝

- էլեկտրոնային եղանակով տրամադրում և ստանում են իրենց վարույթում առկա տեղեկատվությունը, և/կամ համաձայն տեխնիկական արձանագրությունների՝ տեղեկատվական համակարգերի ռեսուրսների անհատույց հասանելիությունը, իրենց կողմից համաձայնեցված ծավալով,

- ամրագրում են տեղեկատվության տրամադրումը, ձեռքբերումը և ոչնչացումը,

- ամրագրում են մյուս Կողմ պետության իրավասու մարմնի հասանելիությունը իրենց տեղեկատվական համակարգերի ռեսուրսներին,

- ապահովում են սույն Համաձայնագրի շրջանակներում ձեռք բերվող տեղեկատվության անվտանգությունը՝ համաձայն յուրաքանչյուր Կողմ պետության օրենսդրությանը և միջազգային պայմանագրերի, որոնց մասնակիցներն են հանդիսանում իրենք,

- սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունն օգտագործում են բացառապես ծառայողական նպատակներով և առանց տեղեկատվությունը տրամադրած Կողմ պետության իրավասու մարմնի նախնական գրավոր համաձայնության չեն փոխանցում երրորդ կողմին,

- պահպանում են տեղեկատվական անվտանգության պահանջները և տեղեկատվական համակարգերում աշխատանքի կանոնները:

Միջպետական տեղեկատվական բանկում պահվող տեղեկությունների վարումն իրականացվում է «Տեղեկատվության փոխանակման ոլորտում ներքին գործերի նախարարությունների փոխհարաբերությունների մասին» 1992թ. օգոստոսի 3-ի համաձայնագրին և «Հանցավորության դեմ պայքարի ոլորտում տեղեկատվության փոխանակման մասին» 2009թ. մայիսի 22-ի համաձայնագրին համապատասխան:

Անդրսահմանային կապուղիներով փոխանցվող տեղեկատվության պաշտպանությունն իրականացվում է տեղեկատվական փոխգործակցության տեխնիկական արձանագրություններին համապատասխան:

Կողմ պետությունների իրավասու մարմիններն ապահովում են տրամադրվող տեղեկատվության ամբողջականությունը, հավաստիությունը և արդիականությունը:

Հոդված 5

Տեղեկատվության պահպանումը և ոչնչացումն իրականացվում է տեխնիկական արձանագրությունների, Կողմ պետությունների ազգային օրենսդրությանը և նրանց միջազգային պարտավորություններին համապատասխան, այդ թվում նաև սույն Համաձայնագրի գործունեության դադարեցումից հետո:

Տեղեկատվական համակարգերից տեղեկատվության ոչնչացումն իրականացվում է Կողմ պետությունների՝ տեղեկատվական համակարգերը վարող իրավասու մարմինների կողմից:

Հոդված 6

Տեղեկատվական անվտանգության պահանջների և տեղեկատվական համակարգերում աշխատանքի կանոնների խախտումներ հայտնաբերելու դեպքերում, տեղեկատվություն տրամադրող Կողմ պետության իրավասու մարմինն իրավունք ունի դադարեցնել տեղեկատվությունը ստացող Կողմ պետության իրավասու մարմնի հասանելիությունը տեղեկատվական համակարգերին:

Տեղեկատվական փոխգործակցության իրականացմանը խոչընդոտող պատճառների հայտնաբերման օրվանից 3 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում, հասանելիությունը կասեցրած Կողմ պետության իրավասու մարմինը, մյուս Կողմ պետության իրավասու մարմնին գրավոր ծանուցում է ուղարկում՝ նշելով հասանելիության կասեցման պատճառները, ամսաթիվը և ժամկետը:

Տեղեկատվության տրամադրումը վերսկսվում է տեղեկատվական փոխգործակցությունն իրականացնելուն խոչընդոտող պատճառները վերացնելուց հետո:

Հոդված 7

Կողմերը՝ սույն Համաձայնագրի իրականացմանն ուղղված ծախսերը կրում են ինքնուրույն:

Հոդված 8

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք հանդիսանում են դրա անբաժանելի մասը,

ձևակերպվում են առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար աշխատանքային լեզու է հանդիսանում ռուսերենը:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի դրույթների կիրարկման և մեկնաբանման հետ կապված առաջացող վիճահարույց հարցերը լուծվում են Կողմ պետությունների իրավասու մարմինների միջև բանակցությունների և խորհրդատվությունների միջոցով:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում այլ միջազգային պայմանագրերից բխող պահանջները և պարտականությունները, որոնց մասնակից են հանդիսանում Կողմ պետությունները:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից՝ այն ուժի մեջ մտնելու համար ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով ստացված վերջին գրավոր ծանուցման օրվանից:

Սույն Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը, Կողմերից մեկի՝ սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մյուս Կողմի մտադրության մասին գրավոր ծանուցում ստանալու օրվանից 6 ամիս անց:

Կատարված է Տուրքիա քաղաքում 13.05.2020 թվականին, երկու բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝



Ռուսաստանի Դաշնության
Կառավարության կողմից՝



СОГЛАШЕНИЕ

между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации об информационном взаимодействии и обмене информацией в электронном виде по вопросам, относящимся к компетенции Полиции Республики Армения и органов внутренних дел Российской Федерации

Правительство Республики Армения и Правительство Российской Федерации, в дальнейшем именуемые Сторонами, руководствуясь общепризнанными принципами и нормами международного права, желая развивать сотрудничество между компетентными органами государств Сторон по вопросам информационного взаимодействия и обмена информацией в электронном виде, согласились о нижеследующем:

Статья 1

Предметом настоящего Соглашения является организация информационного взаимодействия в электронном виде в рамках действующих в отношениях между Республикой Армения и Российской Федерацией международных договоров, компетентными органами по выполнению которых определены Полиция Республики Армения и Министерство внутренних дел Российской Федерации.

В рамках настоящего Соглашения не осуществляется обмен информацией, составляющей государственную тайну государств Сторон.

Компетентные органы государств Сторон осуществляют взаимный обмен информацией в электронном виде с использованием информационных систем, программно-технических средств и (или) предоставляют компетентному органу государства другой Стороны доступ к ресурсам информационных систем, находящихся в ведении компетентных органов государств Сторон (далее- информационные системы).

Компетентные органы государств Сторон обязуются содействовать обеспечению безопасности, полноты и достоверности информации, находящейся в информационных системах.

Информационное взаимодействие компетентных органов государств

Сторон будет осуществляться на основании настоящего Соглашения, технических протоколов, указанных в статье 3 настоящего Соглашения, в соответствии с национальным законодательством государств Сторон и международными договорами, участниками которых являются их государства.

Статья 2

Компетентными органами государств Сторон по реализации настоящего Соглашения являются:

от Российской Федерации - Министерство внутренних дел Российской Федерации;

от Республики Армения - Полиция Республики Армения.

Компетентные органы государств Сторон определяют уполномоченные подразделения по обеспечению информационного взаимодействия и информируют друг друга о перечне своих уполномоченных подразделений.

Об изменениях своих компетентных органов, каждая из Сторон в течение месяца в письменной форме уведомляет другую Сторону по дипломатическим каналам.

Статья 3

В целях реализации положений настоящего Соглашения, уполномоченные подразделения компетентных органов государств Сторон разрабатывают технические протоколы информационного и технологического взаимодействия.

В технических протоколах определяются цели обмена информацией, порядок защиты информации, перечень передаваемых и получаемых в электронном виде сведений, сроки, технология, порядок их передачи, хранения и уничтожения, сроки установки технических средств, введения в эксплуатацию каналов связи и их обслуживания.

Технические протоколы утверждаются руководителями (начальниками) компетентных органов государств Сторон.

Компетентные органы государств Сторон в письменной форме уведомляют друг друга о готовности к информационному обмену после проведения необходимых подготовительных мероприятий, связанных с выполнением требований технических протоколов.

Статья 4

Компетентные органы государств Сторон:

предоставляют и получают в электронном виде информацию, находящуюся в их ведении, и (или) доступ к ресурсам информационных систем на безвозмездной основе в соответствии с техническими протоколами в согласованном ими объеме;

фиксируют предоставление, получение и уничтожение информации;

фиксируют доступ компетентного органа государства другой Стороны к ресурсам своих информационных систем;

в соответствии с законодательством каждого из государств Сторон и международными договорами, участниками которых они являются, обеспечивают защиту информации, получаемой в рамках настоящего Соглашения;

используют информацию, полученную в рамках настоящего Соглашения, исключительно в служебных целях и не передают ее третьей стороне без предварительного письменного согласия компетентного органа государства Стороны, предоставившего информацию;

соблюдают требования информационной безопасности и правила работы в информационных системах.

Обращение со сведениями, содержащимися в Межгосударственном информационном банке, осуществляется в соответствии с Соглашением о взаимоотношениях министерств внутренних дел в сфере обмена информацией от 3 августа 1992 г. и Соглашением об обмене информацией в сфере борьбы с преступностью от 22 мая 2009 г.

Защита передаваемой по трансграничным каналам связи информации осуществляется в соответствии с техническим протоколом информационного взаимодействия.

Компетентные органы государств Сторон обеспечивают полноту, достоверность и актуальность предоставляемой информации.

Статья 5

Хранение и уничтожение информации осуществляются в соответствии с техническими протоколами, национальным законодательством государств Сторон и их международными обязательствами, в том числе после прекращения действия настоящего Соглашения.

Уничтожение информации из информационных систем осуществляется компетентными органами государств Сторон, в ведении которых находятся информационные системы.

Статья 6

Компетентный орган государства Стороны, предоставляющий информацию, имеет право приостанавливать доступ компетентного органа государства Стороны, получающего информацию, к информационным системам в случаях выявления нарушения требований информационной безопасности и правил работы в информационных системах.

В срок, не превышающий 3 рабочих дней со дня выявления причин, препятствующих осуществлению информационного взаимодействия, компетентный орган государства Стороны, приостановивший доступ, направляет компетентному органу государства другой Стороны уведомление в письменной форме с указанием причин, даты начала и срока приостановления доступа.

Предоставление информации возобновляется после устранения причин, препятствующих осуществлению информационного взаимодействия.

Статья 7

Стороны самостоятельно несут расходы по реализации настоящего Соглашения.

Статья 8

По взаимному согласию Сторон в настоящее Соглашение могут вноситься изменения, являющиеся его неотъемлемой частью, которые оформляются соответствующим протоколом, вступающим в силу в порядке, предусмотренном статьей 12 настоящего Соглашения.

Статья 9

При реализации положений настоящего Соглашения в качестве рабочего языка используется русский язык.

Статья 10

Спорные вопросы, возникающие в связи с толкованием или применением положений настоящего Соглашения, решаются путем переговоров и консультаций между компетентными органами государств Сторон.

Статья 11

Положения настоящего Соглашения не затрагивают прав и обязательств, вытекающих из других международных договоров, участниками которых являются государства Сторон.

Статья 12

Настоящее Соглашение вступает в силу со дня получения по дипломатическим каналам последнего письменного уведомления о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу.


Настоящее Соглашение прекращает свое действие по истечении 6 месяцев с даты получения одной из Сторон письменного уведомления другой Стороны о намерении прекратить действие настоящего Соглашения.

Совершено в г. Москва " 13 " мая 2021г. в двух подлинных экземплярах, каждый на армянском и русском языках, при этом оба текста имеют одинаковую силу.

**За Правительство
Республики Армения**



**За Правительство
Российской Федерации**



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021թ. մայիսի 13-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվական փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պաշտոնակատար՝**



Վահագն Փիլիպոսյան